**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի նոյեմբերի 23-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35 Հ պայմանագրում 2018 թվականի փետրվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շեն-քի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35 Հ պայմանագրի կատար-ման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 23.11.2016թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35Հ գնման պայմանագրի

ք. Երևան 15.02.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Ղարքիլիսա>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Ջաղացպանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 23.11.2016թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **438 800 (չորս հարյուր երեսունութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012656
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Տ. Մեծի 63/21
<<Յունիբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 24101101941100
ՀՎՀՀ 06929659

Տնօրեն՝

_____________ Լ. Ջաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*23.11.2016թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/35Հ գնման պայմանագրի*
*15 .02.2018թ. կնքված N 2 համաձայնագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***
***(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 05)***

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | - | - | 14 100 | 110 500 | 110 500 | 110 500 | 314 400 | 314 400 | 314 400 | 438 800 | 438 800 | 438 800 | 438 800 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012656
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Տ. Մեծի 63/21
<<Յունիբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 24101101941100
ՀՎՀՀ 06929659

Տնօրեն՝

Լ. Ջաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.